# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
# № ԳՀԱՊՁԲ-20-9/2-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** **27-ը մայիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Արֆարմացիա» ՓԲԸ**-ն՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն **Ա. Հովհաննիսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **20.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/2-3** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***382,600 (երեք հարյուր ութսուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արֆարմացիա» ՓԲԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Րաֆֆու 111 |
| ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011144199 | Հ/Հ 163008100220 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02505735 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | գլխավոր տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/2-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. |
| 19. | Ուրսոդեօքսիխոլաթթու ursodeoxycholic acid | հատ | 500 | 155.20 | 77,600 | 500 | | |
| 32. | Ռիսպերիդոն risperidone | հատ | 1600 | 27.50 | 44,000 | | | 1600 |
| 47. | Տրամադոլ (տրամադոլի հիդրոքլորիդ) tramadol (tramadol hydrochloride) | հատ | 3000 | 87 | 261,000 | | 1000 | 2000 |
| **Ընդամենը՝** | | | | | **382,600** | | | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/2-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 19. | **Այլ դեղորայք**/Ուրսոդեօքսիխոլաթթու ursodeoxycholic acid/ | 33691176/685 | 77,600 | 77,600 | 77,600 | 77,600 | 77,600 | 77,600 | 77,600 | 77,600 | 77,600 |
| 32. | **Ռիսպերիդոն - N05AX08**/Ռիսպերիդոն risperidone/ | 33691196/501 | 44,000 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 44,000 | 44,000 | 44,000 |
| 47. | **Տրամադոլ (տրամադոլի հիդրոքլորիդ)-N02AX02/** Տրամադոլ (տրամադոլի հիդրոքլորիդ) tramadol (tramadol hydrochloride)/ | 33691226/501 | 261,000 | 0 | 0 | 87,000 | 87,000 | 87,000 | 261,000 | 261,000 | 261,000 |
| **Ընդամենը** | | | **382,600** | **77,600** | **77,600** | **164,600** | **164,600** | **164,600** | **382,600** | **382,600** | **382,600** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն ՌԲՎ ԵՏԱ գլխավոր վարչության պետ | «Արֆարմացիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն |
| Ն. ՅՈՒԼՋՅԱՆ | Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |